Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արարատի մարզի Նորամարգ գյուղական համայնքում 2016 թվականին
1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ
/հանրային լսումներ/

2016 թվականի հուլիսի 6 -ին Արարատի մարզի Նորամարգ համայնքում կազմակերպված հանրային լսումներին մասնակցում էին համայնքի ղեկավարը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավար կազմը, դպրոցի և գյուղական բուժամբուլատորիայի ներկայացուցիչները, ավագանու անդամները.

Հաղորդության ներկայացվել է 2016 թվականի 1-ին կիսամյակում համայնքի ղեկավարի կողմից իրականացված գործունեության վերաբերյալ հաշվետվությունն:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը և դրանից բխող խնդիրները շարունակել են մնալ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

Ամփոփվել են 2016 թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները :
2016թվականի առաջին կիսամյակում համայնքային բյուջեի եկամուտներն կազմել են 21454,76հազար դրամ, և պլանը կատարվել է 74.65 %-ով, հողի հարկի հավաքագրման առաջադրանքները կազմել են ֆիզիկական անձանցից 1525,66 հազ. դրամ կամ 53,34%, իրավաբանական անձանցից 81,43հազ.դրամ,կամ 37,02-ով, գույքահարկ ՝ շենք-շինություններից- ֆիզկական անձանցից 264,1 հազ. դրամ՝ 160,01%-ով, իրավաբանական անձանցից՝ 175,64 հազ.դրամ կամ 140,51-ով, փոխադրամիջոցներից-1095,01հազ դրամ է 95,22 %-ով:
Նվազագույնի է հասցվել ապառքները:
Համայնքի ղեկավարը
Շարունակում է գործել մսուր-մանկապարտեզը, հաճախող երեխաների թիվը հասցվել է 50-ի , գործում է երկու խումբ՝ միջին և կրտսեր :
Կատարվել են առավել անբարենպաստ փողոցների խճապատում, անց է կացվել համայնքի կենտրոնական փողոցի լուսավորության աշխատանքներ:
Պայմանագրային հիմունքներով իրականացվել է համայնքի պարբերական աղբահանություն և բարեկարգման աշխատանքներ:
2016թվականի 1-ին կիսամյակում համայնքապետարան մուտքագրվել է քաղաքացիների կողմից ստացված նամակ, որոնք հիմնականում ,ֆինանսական աջակցություն ստանալու, անճշտությունների ուղղելու, փոստային հասցե տրամադրելու , ջրամատակարարման կարգավորման վերաբերյալ են եղել:
Համայնքի ղեկավարի մոտ 2015թվականի 1-ին կիսամյակում ընդունելության են եղել 36 քաղաքացիներ, ավագանու անդամների մոտ 25 քաղաքացի:
2016թվականի 1-ին կիսամյակում համայնքի բնակչության տարբեր խմբերի հետ կազմակերպված հանդիպումների, ինչպես նաև ավագանիների մասնակցությամբ բնակիչների ընդունելության ժամանակ արծածված հարցեր գգալի մասը իրենց լուծումն են ստացել համայնքապետարանի համապատասխան ծառայությունների կողմից:
2016 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել են անցկացվել մարզա- մշակութային միջոցառումներ՝ նվիրված նշանակալից իրադարձությունների տարեդարձերին և պետական տոներին:
2016 թվականի մայիսի 9-ին, մայիսի 28-ին , հունիսի 1- ին համայնքի մանկապարտեզում կազմակերպվել է ՀՄՊ հաղթանակի և Շուշիի ազատագրման , Հայկական առաջին հանրապետության հռչակման տարեդարձերի և երեխաների պաշտպանության օրվան նվիրված , ՀՄՊ մասնակիցներին , Զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին , մանկապարտեզի սաներին և համայնքի առավել անապահով ընտանիքների երեխաներին տրվել են նվերներ:
Համայնքի հիմնախնդիրների լուծմանն ուղղված [illegible] ներպվել են հանրային լսումներ:

Համայնքի ղեկավար [illegible] Վարդգես Գալստյան